ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ

Հ Ր Ա Մ Ա Ն Ը

«13» օգոստոսի 2018 թվականի N 102-Հ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՐԻ ԴԵՊՔՈՒՄ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԻ ԵՆԹԱԿԱ ՀԱՆՔԱՅԻՆ ՀՈՒՄՔԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՄԵԿԱՆԳԱՄՅԱ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 25-ի N 1524-Ն որոշումը, ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարի 2015 թվականի մայիսի 6-ի թիվ 139-Ն հրամանով հաստատված հավելված 1-ի 1-ին, 9-րդ և 10-րդ կետերի պահանջները, հաշվի առնելով հրամանի հավելված 2-ով սահմանված սահմանափակումների ենթակա հանքային հումքի տեսակների ցանկի 1-ին կետի 4-րդ ենթակետը, ինչպես նաև «ԱՆՄՈՌ» ՓԲ ընկերության կողմից 2018 թվականի օգոստոսի 7-ին ներկայացված թիվ 4 գրությունը և կից փաստաթղթերը.

Հրամայում եմ

1. «ԱՆՄՈՌ» ՓԲ ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրել հանքային հումքի տեսակի՝ ՀՀ տարածքից երրորդ երկրներ արտահանման մեկանգամյա լիցենզիա ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 7103100 009 ծածկագրին դասվող 3 կիլոգրամ երկնագույն փիրուզ Իտալիայի Հանրապետություն արտահանելու նպատակով:
2. Սահմանել հանքային հումքի տեսակի՝ ՀՀ տարածքից երրորդ երկրներ արտահանման մեկանգամյա լիցենզիայի գործողության ժամկետը՝ տրման պահից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 31-ը:
3. Ընդերքի գործակալության պետին՝ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել մեկանգամյա լիցենզիայի հանձնումը Ընկերությանը:
4. Սույն հրամանը կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:
5. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի տեղակալ Գևորգ Գևորգյանին:

ԱՐԹՈՒՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ